ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ «ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ» ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ՏԱՏՅԱՆԱ ՇՋԵՊԱԿՈՎԱ

Ժամանակակից փուլում սովետական բաղմազգ դրականությունը բնութագրվում է իրականության լայն ընդգրկմամբ, մեր ժամանակի կարևորագույն պրոբլեմների դրվածքի խորությամբ, բազմաժանրությամբ, բազմազան ու հետաքրքիր ոճական որոնումներով։ Նրա կարևորագույն խնդիրներից մեկը նոր տիպի ժողովրդական բնավորությունների ստեղծումն է, որոնք ազգային են իրենց սովորություններով, ապրելակերպից բխող որոշ գծերով, բայց սոցիալիստական՝ իրենց համոզմունքներով ու հայացքներով։

Ժողովրդական բնավորության պրոբլեմը կապված է, մի կողմից, մեր երկրի այս կամ այն ժողովրդի ազգային բնավորությունների արտահայտման, մյուս կողմից, դրական հերոսի պրոբլեմի հետ, հերոս, որը ժողովրդական կյանքին կապված է «ամենակենսական կապով»։ «Ժողովրդական բնավորություն» հասկացության գրականագիտական էությունը որոշելու համար անհրաժեշտ է ճշգրտել բուն «ժողովուրդ» հասկացությունը ժամանակակից փուլում, սովետական հասարակության մեջ։ Ժողովուրդը ոչ թե մեկընդմիշտ տրված, այլ փոփոխվող հասկացություն է, որի էությունը հասարակության զարգացման տարբեր փուլերում, պատմական տարբեր ժամանակաշրջաններում զգալիորեն փոխվել է։ Մարքս-լենինյան փիլիսոփայությունը ժողովուրդը սահմանում է որպես «սոցիալական մի ընդհանրություն, որը պատմության տարբեր փուլերում իր մեջ ներառնում է այն խավերն ու դասակարգերը, որոնք օբյեկտիվորեն ընդունակ են մասնակցելու հասարակության առաջադիմական զարգացման խնդիրների լուծմանը...»[1]։

Գեղագիտության մեջ «ժողովրդական բնավորություն» հասկացությունը գոյություն է ունեցել շատ վաղուց։ Յուրաքանչյուր նոր ժամանակաշրջանում այն արտահայտվել է յուրօրինակ բովանդակությամբ, որի պատճառով մինչև այժմ չկա նրա միասնական մեկնաբանությունը, թեև վերջին տարիներին գրականագետները հանգել են այդ կատեգորիայի ավելի կամ պակաս նույնական ըմբռնմանը։

Արդեն Վ. Գ. Բելինսկու աշխատություններում «ժողովրդական բնավորություն» կատեգորիան համադրվում է «ազգային բնավորություն» և «աշխատավոր գյուղացու կերպար» հասկացությունների հետ։ Բելինսկին համոզված էր, որ հենց ժողովրդական սկզբունքը՝ ձևավորված գեղագիտությամբ և գյուղացիության աշխատանքային փորձով, պետք է դառնա իսկական ազգային ոգու և բնավորության հիմքը։ «Ժողովրդի մեջ արդեն արագորեն զարգանում է կրքությունը, և նա արդեն ունի իր բանաստեղծները, որոնք նրան մատնանշում են իր ապագան, կիսելով նրա տառապանքները՝ նրանից չմեկուսանալով ոչ հագուստով, ոչ ապրելակերպով։ Նա դեռևս թույլ է, բայց միայն նա է իր մեջ պահում ազգային կյանքի կրակը և համոզմունքի թարմ խանդավառությունը...»[2],— *գրում է նա։*

Յուրաքանչյուր բնավորության մեջ Բելինսկին տեսնում է անհատականաներկնելին, անձնականը և ընդհանուրը, որը հատուկ է ամբողջ ազգին. «Իսկական մարդ, այլ ոչ թե ուրվական դառնալու համար նա պետք է դառնա ընդհանուրի մասնավոր արտահայտությունը կամ անսահմանի վերջնական դրսևո-

---

[1] «Большая Советская Энциклопедия», т. 13, М., 1974, с. 254.

[2] В. Г. Белинский, Собрание сочинений, т. 7, М., 1981, с. 64.

ռումը»[3]։ Ըստ Բելինսկու, իսկական ժողովրդական բնավորությունների մեջ դրսևորվում են ազգի ոչ թե ինչ-որ մշտնջենական, անփոփոխ, այլ հենց պատմական պայմանների միջոցով դաստիարակված և կյանքի հանգամանքներով պայմանավորված այս կամ հերոսին հատուկ գծեր։ Խոսելով գոգոլյան Տարաս Բուլբայի մասին, Բելինսկին պնդում է. «Բուլբայի կոպտությունը և սահմանափակվածությունը պատկանում են ոչ թե նրա անձնավորությանը, այլ նրա ժողովրդին ու նրա ժամանակին։ Ամեն մի ժողովրդի կյանքի էությունը մեծ իրականություն է. Տարաս Բուլբայի մեջ այդ էությունը գտել է իր լիակատար արտահայտությունը»[4]։

Վ. Գ. Բելինսկու համողմամբ անպայման չէ, որ ժողովրդական բնավորությունը դիտվի իբրև գյուղացիական բնավորություն, թեև գյուղացիությունն էր կազմում այն ժամանակվա Ռուսաստանի բնակչության ճնշող մեծամասնությունը։ Դա մի բնավորություն է, որն արտահայտում է այն ազգի բարոյականության և ապրելակերպի որոշ նշաններ, որին պատկանում է, մի տիպ, որն ավելի մեծ չափով արտահայտում է տոհմական, քան անհատական գիտակցություն, ուստի Բելինսկին ժողովրդական է համարում և՛ Մաքսիմ Մաքսիմիչի, և՛ վաճառական Կալաշնիկովի կերպարները, ինչպես նաև՝ այն ժամանակվա գրականության մեջ հայտնի այլ հերոսների մի ամբողջ շարք։

«Ազգ» և «ժողովուրդ» կատեգորիաները, որոնք Բելինսկու ժամանակներում հաճախ օգտագործվում էին որպես նշանակությամբ մոտ բառեր, հետագայում սկսեցին ժամանակ առ ժամանակ ընկալվել որպես ներհակ բառեր դասակարգային հասարակության պայմաններում, ինչի վրա բարձրացս ուշադրություն է դարձրել Վ. Ի. Լենինը։ «Քննադատական դիտողություններ ազգային հարցի վերաբերյալ» հոդվածում նա այդ բանը ավելի հստակորեն է ձևակերպում, խոսելով յուրաքանչյուր ազգային կուլտուրայի մեջ երկու կուլտուրաների մասին, որոնք կառավարող դասակարգերի ներկայացուցիչները պատկերացնում են որպես միասնական և անբաժանելի. «Յուրաքանչյուր ազգային կուլտուրայում կան, թեև չզարգացած, դեմոկրատական և սոցիալիստական կուլտուրայի տարրեր, որովհետև յուրաքանչյուր ազգի մեջ կա աշխատավոր և շահագործվող մասսա, որի կյանքի պայմաններն անխուսափելիորեն ծնում են դեմոկրատական և սոցիալիստական գաղափարախոսություն... Առաջադրելով «դեմոկրատիզմի և համաշխարհային բանվորական շարժման ինտերնացիոնալ կուլտուրայի» լոզունգը, մենք յուրաքանչյուր ազգային կուլտուրայից վերցնում ենք միայն նրա դեմոկրատական և նրա սոցիալիստական տարրերը...»[5]։

Սովետական հասարակության մեջ «ազգ» և «ժողովուրդ» հասկացությունները զուրկ են ներհակությունից, դրանք ձեռք են բերել փոխադարձ կապ և կախվածություն։ 1861 թվականի ռեֆորմից հետո «ժողովուրդ» հասկացությունը, դրա հետևանքով նաև «ժողովրդական բնավորություն» կատեգորիան հետզհետե ընդլայնում են սահմանները՝ իրենց մեջ ներառնելով Ռուսաստանի ժողովուրդների այն ժամանակվա աշխատավորական զանազան խավեր։ Սովետական ժամանակաշրջանում ձևավորվեց ժողովրդական մտավորականությունը, ուժ ձեռք բերեց բանվոր դասակարգը որպես ժողովրդի լավագույն հատկություններիս պոտենցիալ հնարավորությունների արտահայտիչ, որն իր արտացոլումը գտավ սովետական գրականության լավագույն ստեղծագործություններում։

Գրականության մեջ ժամանակակից ժողովրդական բնավորությունը ժողովրդի միջից ելած մարդու, աշխատավորի կամ պատմության իսկական կերտողի բնավորությունն է։ Դա այնպիսի հերոս է, որը գիտակցաբար կամ ներքին մղումով իրեն զգում է որպես ժողովրդի մի մասնիկ և ապրում է համաձայն

---

3 Նույն տեղում, հ. 2, 1977, էջ 200։

4 Նույն տեղում, հ. 3, 1978, էջ 82։

5 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 24, էջ 151—152։

բարոյական այն նորմերի, որոնք մշակվել են նրա գոյության և զարգացման ամբողջ ժամանակամիջոցում։ Այդպիսի հերոսը ոչ թե պարզապես ապրում է և աշխատում, այլ ձգտում է գտնել իր տեղը կյանքում, ամբողջ ժողովրդի պատմական զարգացման մեջ, հասու լինել իր «ակունքներին» ու «արմատներին», որպեսզի համոզվի իր ընտրած կյանքի ուղու ճշտության մեջ։ Այդ պատճառով ժամանակակից ժողովրդական բնավորության հիմքում, սոցիալիստական բովանդակության հետ մեկտեղ, ընկած է նաև նրա ազգային ինքնությունը։։ Վ. Օզերովը շատ ճիշտ է ձևակերպել տվյալ պրոբլեմի էությունը սովետական դրականության զարգացման ժամանակակից փուլում. «Ժողովրդական» բնավորությունը ինչ-որ քարացած, անխախտ, անփոփոխ բան չէ։ Այն ձևավորվել ու զարգացել է հեղափոխական-հայրենասիրական պայքարին մասնակցելու, հասարակական նոր հանգամանքների միջոցով ծնունդ առած նոր գծերի հետ անցյալի լավագույն, պատմականորեն կայուն հատկությունների դիալեկտիկական զուգորդման հիման վրա։ Կոպիտ կերպով սխալվում է նա, ով, ժխտելով ինչ-որ հատկությունների «մշտնջենականության» մասին թեզիսը, ընկնում է մեկ ուրիշ ծայրահեղության մեջ, իրեն թույլ տալով քամահրանքով վերաբերվել այնպիսի սուրբ հասկացությունների հետ, ինչպիսին է ժողովրդի հիշողությունը»[6]։ Այդ երկու սկզբունքների զուգորդումը միշտ անհատական է և անկրկնելի, որը պայմանավորված է հերոսների հոգեբանական խառնվածքի, նրանց կենսափորձի, աշխատանքի պայմանների և ազգային կենցաղի տարբերությամբ։ Այնուամենայնիվ, միութենական հանրապետությունների արձակագիրների ստեղծագործություններում կարելի է առանձնացնել ժողովրդական բնավորությունների պատկերման ինչ-ինչ որոշակի դոմինանտներ։ Ժողովրդական բնավորությունը և՛ կյանքում, և՛ գրականության մեջ ներկայացնում է այն մարդուն, որը տոգորված է մեր հասարակության զարգացման ոգով և չի կորցրել ո՛չ իր ազգային էերպարանքը, ո՛չ պատմական հիշողությունը, ո՛չ դարերով ստուգված ժողովրդական բարոյականության սկզբունքները։

Գրականության մեջ ժողովրդական բնավորությունները երևան են գալիս առնվազն երկու տեսանկյունով. նախ, որպես ամբողջությամբ վերցրած ժողովրդական զանգվածների կերպար, որի մեջ մարդկային առանձին դեմքերը և բնավորությունները հստակորեն չեն ընդգծված, քանի որ նրանք կարևոր են ոչ թե ինքնուրույնաբար, այլ որպես միասնական միաձուլվածքի մասնավոր կերպարանք։ Ժողովրդական բնավորության այդպիսի ընկալումը առանձնահատուկ նշանակություն ունի մասշտաբային, դարակազմիկ իրադարձությունների պատկերման ժամանակ, երբ դրանց մեջ ներքաշված են ժողովրդի վիթխարի զանգվածներ կամ ամբողջ ազգեր։ Տվյալ դեպքում ժողովրդական բնավորությունը համարժեք է «ժողովուրդ» հասկացությանը։ Այսպիսի պատկերում մենք տեսնում ենք Ա. Տոլստոյի «Տառապանքի ուղիներով», Կ. Սիմոնովի «Ողջերն ու մեռածները», Խ. Դաշտենցի «Ռանչպարների կանչը» գրքերում և մի շարք այլ ստեղծագործություններում։

Արդեն Մ. Գորկու ստեղծագործության մեջ սկսեց ի հայտ գալ ժողովրդական բնավորությունների պատկերման մյուս տիպը՝ դրանց ռեալ դրսևորման ամբողջ բազմազանության մեջ։ Գորկին ժողովրդական մասսան պատկերում է նրա ազգային էությամբ, կոնկրետ կերպարների հոգեբանական բազմազանությամբ, կերպարներ, որոնք հաճախ շատ յուրօրինակ են ու գունագեղ, երբեմն էլ՝ հակասական։ Դա երևում է նրա վաղ շրջանի վիպակներում և պատմվածքներում, ինչպես նաև «Կլիմ Սամգինի կյանքը» էպոպեայում, որտեղ ժողովրդի կերպարը ներկայացված է ոչ միայն որպես վիթխարի, անընմբռնելի, իր առաջընթաց շարժման մեջ աճող մասսա, այլև որպես առաջին պլանի վառ և արտահայտիչ հերոսներ։ Գորկին ցույց է տալիս ժողովրդի գիտակցության բարդությունը պատմական նոր պայմաններում և հաստատում ժողովրդի դիա-

[6] «Литературная газета», 22. 11. 1972.

լեկտիվական շարժումը դեպի առաջադիմություն, ազատություն և սոցիալական արդարություն։

Ժամանակակից սովետական արձակում ևս շատ հաճախ ժողովրդական բնավորությունը գոյանում է առանձին հերոսներից, որոնք պատկերված են հստակ, բազմակողմանի, կարևոր են այս կամ այն ստեղծագործության կառուցվածքում որպես մարդկային անկրկնելի անհատականություններ և միևնույն ժամանակ կրում են ամբողջ ժողովրդի կյանքի ու կենցաղի կարևոր դոմինանտները։ Անկասկած, սրանց թվին են պատկանում Շուկշինի «Տարօրինակ մարդիկ», Բելովի «Իվան Աֆրիկանիչը կամ Սենկա Մապուրիչը», Հ. Մաթևոսյանի «Մենք ենք, մեր սարերը» վիպակի հերոսները, Ի. Դրուցեի «Մեր բարության բեռը»։ Պատկերման այդպիսի սկզբունքը ավելի շատ հատուկ է ամենօրյա, առաջին հայացքից նույնիսկ սովորական իրադարձությունների ցուցադրմանը, որոնց մեջ էլ ավելի ստույգ քննության դեպքում ձևավորվում է ժողովրդական կյանքի ամբողջական կերպարը։ Ժողովրդական բնավորությունների պատկերման և՛ առաջին, և՛ երկրորդ ելակետերը կապված են միմյանց հետ, ամբողջությամբ վերցրած լրացնում և խորացնում են ժողովրդի պատկերումը ինչպես մեկ ստեղծագործության, այնպես էլ ամբողջ սովետական գրականության մեջ։

Յուրաքանչյուր ժողովրդական բնավորություն իր էությամբ ազգային է։ Ժողովրդական և ազգային բնավորություններ հասկացությունների միջև ներհակություն չկա, բայց այնուամենայնիվ, դրանցում գոյություն ունեն որոշ տարբերություններ։

Սովետական դարաշրջանի մարդու ժողովրդական բնավորությունը, բացի վառ արտահայտված ազգային յուրօրինակությունից, միևնույն ժամանակ իր մեջ պետք է կրի սովետական բնավորությունը ներկայացնող գծերը։ Բացի դրանից, մարդու մեջ ազգայինի դրսևորումը, որպես կանոն, զուգակցվում է այնպիսի հատկությունների հետ, որոնք ունեն արտահայտման ինտերնացիոնալ ձևեր։ Հերոսի մեջ նրա վառ, անկրկնելի ազգային էությունը շեշտելու ձգտումը երբեմն հանգեցնում է հակառակ արդյունքների՝ սխեմատիզմի, որը սպանում է հերոսի բուն հոգին։

Հերոսի անկրկնելի, անհատական գծերը ամենից հաճախ ցեղակից ազգերի ու ազգությունների և նույնիսկ ամբողջ մարդկության գծերի կոնկրետ-պատմական, ազգագրական և հոգեբանական դրսևորումն են։ Ռուս գեղջկուհու և կովկասյան լեռնականի իմաստությունը բխում է տարբեր ակունքներից, որոնց հիմքում ընկած են կյանքի ճանաչման համամարդկային ժողովրդական իմաստությունը, նրա հավերժական գեղեցկության փառաբանումը, հարգանքը նախնիների և սերը նրանց նկատմամբ, ովքեր կգան փոխարինելու անցյալի և այժմյան սերունդներին։ Ազգային տարբեր երանգներ ունեն նաև այնպիսի համամարդկային հատկություններ, ինչպես բարությունը, հյուրասիրությունը, խորամանկությունը, համարձակությունը, խիզախությունը, հայրենասիրությունը։ «Ազգային բնավորությունը և ազգային հոգեբանությունը միայն ժողովրդի հոգևոր կերպարանքի անկրկնելի առանձնահատկությունների միագումարը չեն,—գրում է Դ. Լոմիձեն,—այդ հասկացությունների բովանդակության մեջ արտացոլված է ընդհանուրի և առանձնահատուկի դիալեկտիկան... Ժողովրդի ազգային բնավորությունը ձևավորվում է համամարդկային հատկությունների և արժանիքների յուրօրինակ զուգակցումից ու դրսևորումից, որոնք յուրաքանչյուր դեպքում մեր առջև հառնում են իրենց անկրկնելի կերպարանքով»[7]։ Համամարդկային գծերի և հատկությունների ազգային երանգը օգնում է թափանցելու այս կամ այն ժողովրդի հոգեբանության, կենցաղի, պատմության մեջ։ Համամարդկային վերացական հասկացությունները ժողովրդական բնավորությունների մեջ ձեռք են բերում միս ու արյուն։ Ժամանակակից սովետական

---

[7] Г. Ломидзе, Интернациональный пафос советской литературы, М., 1970, с. 12.

դրականության մեջ ամենից հաճախ հանդիպում ենք հենց այդ տիպի ժողովրդական բնավորությունների՝ անկրկնելի և յուրօրինակ. որոնք արտահայտում են ժողովրդի բարոյական ու փիլիսոփայական հայացքները՝ կապված արդի փուլում ամբողջությամբ վերցրած ժողովրդի գիտակցության աճած մակարդակի և սովետական բազմազգ արվեստի փիլիսոփայության հետ։

Ժողովրդական բնավորությունների ձևավորման վերլուծության պրոբլեմները դրականության և գրական քննադատության մեջ բավականաչափ բարդ են և ոչ միանշանակ։ Մեկ, նույնիսկ ամենալիարյուն և արտահայտիչ կերպարը ի վիճակի չէ մարմնավորելու ժողովրդական բնավորությունների ամբողջ բազմազանությունն ու էությունը։ Յուրաքանչյուր գրող տալիս է «ժողովրդական բնավորություն» բաղմիմաստ հասկացության լոկ մեկ կամ մի քանի կողմերը։

Ժողովրդական բնավորության գծերը լիակատար չափով և դիալեկտիկորեն բացահայտել ի վիճակի է միայն ամբողջությամբ վերցրած առաջավոր գրականությունը, ինչպիսին է բազմազգ սովետական գրականությունը։

Ժողովրդական բնավորությունն իր առավել դրական. իդեալական արտահայտության մեջ ժողովրդի հոգևոր պոտենցիալի, նրա արժանապատվության, նրա ստեղծագործական ու բարոյական ուժերի կրողն է։ Իր ազգի, իր ժամանակի և իր երկրի էությունն արտացոլող ժողովրդական տենդենցների արտահայտիչը կարող է լինել միայն որոշակի արժեքներ կրող մարդը, որը հասու է դարձել երկրի և ամբողջ մարդկության հասարակական և մշակութային զարգացման հիմնական օրինաչափություններին։ Ուստի կարելի է ասել, որ իսկական ժողովրդական բնավորության մեջ արտացոլվում է այն երկար ճանապարհը, որը տանում է դեպի ժողովուրդը, իրեն ոչ միայն որպես անհատ՝, այլև միասնական ամբողջության մի մասի աստիճանական գիտակցումը, կյանքում, սերունդների շղթայի մեջ իր տեղի իմաստավորումը։ Եվ եթե միայն մարդու առջև ծառանում է այդպիսի փորձություն, որը պահանջում է հոգևոր և բարոյական ուժերի լարում, նրա մեջ կարող են բացահայտվել ոգու՝ մինչև այժմ անտեսանելի ոլորտներ, որոնք նրան բարձրացնում են մինչև իսկական ժողովրդայնության մակարդակը։ Դա հատկապես դրսևորվում է Հայրենական պատերազմի մասին ժամանակակից արձակում, երբ ժողովրդական հերոսներ են դառնում «հավիտյան սասնինամյա» զինվորները (Գ. Բակլանովի կամ Յու. Բոնդարևի, Ա. Ադամովիչի, Վ. Բիկովի, Բ. Վասիլևի, Ս. Խանզադյանի և ուրիշների ստեղծագործություններում)։ Ժողովրդայնություն ունեն Ա. Լիսյատովի «Եվ այս ամենը նրա մասին...» ու Վ. Տիտովի «Ի հեճուկս բոլոր մահերի» վիպակների հերոսներ Եվգենի Ստոլետովի և Սերգեյ Պետրովի բնավորությունները, որոնք հանում մարդկանց հերոսություն են ցուցաբերել բարդ, ճգնաժամային իրադարձություններում։ Ժողովրդական բնավորության դրական կողմին հատուկ են հերոսականությունը, ստեղծագործական պաթոսը։ Պ. Պրոսկուրինը գրում է. «Այս անգամ ես ուշադրությամբ նայեցի շուրջս։ Կատարվող ամեն ինչին և ամենուրեք նկատեցի երբեմն պաշտոնականորեն կազմակերպված, բայց ավելի հաճախ բուն ժողովրդական բնավորությանը օրգանապես հատուկ կյանքի հերոսական, ստեղծագործական սկզբունքի հաստատումը...»[8]։

Ժողովրդական բնավորությունների պատկերման և դրական հերոսի պրոբլեմների շուրջ շատ է խոսվել ինչպես 70-ական թվականներին տեղի ունեցած բանավեճերի ընթացքում, այնպես էլ վերջին տարիներին լույս տեսած առանձին հոդվածներում և մենագրություններում[9]։ Անկասկած, այդ հասկացությունները սերտորեն փոխկապված են միմյանց հետ, բայց այնուամենայնիվ դրանք լիովին նույնացնել չի կարելի։

---

[8] П. Проскурин, Порог любви («Москва», 1985, № 3, с. 106).

[9] В. Воронов, Лики народной жизни, М., 1972; Ю. Суровцев, Необходимость диалектики, М., 1982; В. Воронов, Художественная концепция, М., 1984; Л. Ершов, Память и время, М., 1984.

Ճշգրտվում է նաև գրական հերոսի բուն ըմբռնողությունը, նրա լուսաբանման մեջ հաղթահարվում են նորմատիվությունն ու իդեալականացումը։ Ժողովրդական բնավորության աճը և ձևավորումը ավելի ու ավելի հաճախ են գրավում գրողների ուշադրությունը։ Այդ պրոցեսը արտացոլված է Պ. Պրոկուրինի «Ճակատագիր» վեպում, Ֆ. Աբրամովի «Պրյուսլինները» տետրալոգիայում, Ջ. Այտմատովի «Մնաս բարով, Գյուլսարի» ու «Փոթորկոտ կիսակայարանը» («Նվ դարից ավելի երկար է տևում օրը») ստեղծագործություններում, Հ. Մաթևոսյանի «Հողի ջիղը» (ռուսերեն թարգմանությամբ՝ «Մայրը գնում է ամուսնացնելու որդուն») վիպակում, սովետական բազմազգ արձակի մի ամբողջ շարք այլ նշանակալից ստեղծագործություններում։

Ժողովրդական բնավորությունները միշտ չէ, որ դրական են։ Դա, որպես կանոն, տիպական կերպար է՝ վերցրած կյանքի բուն խորքից։ Գրողն իր հերոսին վերցրել է ժողովրդի ներկայացուցիչներից և պատկերել կարեկցանքով ու ըմբռնումով՝ թեպետև ոչ միշտ համաձայնվելով նրան։ Այդպիսի բնավորությունների մեջ արտացոլում են գտնում ոչ միայն այս կամ այն ժողովրդի լավագույն, այլև անցյալի մնացուկները զգացնել տվող գծերը։ Վերջիններիս նկատմամբ քննադատական դիտողություններ տեսնում ենք շատ գրողների ստեղծագործություններում, այդ թվում՝ հայրենակիցներին ուղղված Ֆ. Աբրամովի նշանավոր բաց նամակում, Վ. Պետրոսյանի «Հայկական էսքիզներում», Ա. Մալսագովի «Առակ լեռնական էտիկետի մասին» գրքում և այլն։ Որպես կանոն, քննադատության են ենթարկվում ազգային սահմանափակվածությունը, իրենց դարն ապրած հին սովորություններին հետևելը։ Այդ գծերը, որոնք փոխանցվել են ավանդական ապրելակերպով, ընկալվել են մանկուց, երբեմն դժվարությամբ են վերացվում նույնիսկ այն ժամանակ, երբ այդ որակների զարգացման և գոյության համար սոցիալական պայմաններն արդեն անհետացել են։

Ճշմարտացի ժողովրդական բնավորություններ են ստեղծել Վ. Բելովը («Սովորական գործ»), Վ. Շուկշինը («Գյուղի բնակիչներ»), Հ. Մաթևոսյանը («Մենք ենք, մեր սարերը», «Օգոստոս», «Տերը»), Ֆ. Աբրամովը («Պելագեյա», «Ալկա») և ուրիշներ։ Բայց ամբողջությամբ վերցրած պետք է նկատել, որ սովետական ժամանակաշրջանի ժողովրդական բնավորության մեջ առավել ցայտուն են արտահայտվում ինտերնացիոնալիզմը, սոցիալական ակտիվությունը, հայրենասիրությունը։ Դրան նպաստում է այն, որ յուրաքանչյուր ազգային գրականության լավագույն ստեղծագործությունները դառնում են ընդհանուր միութենական սեփականություն, ոչ միայն գեղագիտորեն, այլև բարոյապես ներգործելով այլազգի ընթերցողի վրա, նպաստելով ստեղծագործության մեջ պատկերված ժողովրդական ընավորության կամ բնավորությունների խմբի ազգային այս կամ այն լավագույն գծերի լայն պրոպագանդին։ Սովետական բազմազգ գրականության նշանավոր հետազոտող Յու. Սուրովցևը գրում է. «Մեր երկրում հետևողականորեն և անշեղորեն ձևավորվում և աստիճանաբար առաջատար, եթե ոչ գերակշռող է դառնում ընթերցողի նոր տիպը, որը անկախ սեփական ազգային պատկանելիությունից, ամբողջ սովետական բազմազգ գրականությունն ընկալում է որպես իրենը, հարազատ և իր համար առօրյապես անհրաժեշտ հոգևոր հարստություն...»[10]։

Յու. Սուրովցևը իր «Դիալեկտիկայի անհրաժեշտությունը» գրքում բերում է համոզիչ «ինակն այն բանի, թե ինչպես գրողի ազգային գիտակցությունը դառնում է ինտերնացիոնալ և ընթերցողների վրա ինչպես են ներգործում ՍՍՀՄ տարբեր հանրապետությունների գրողների կերտած ստեղծագործությունները։ «1979 թվականի նոյեմբերին ՍՍՀՄ գրողների միությունը ՌՍՖՍՀ մանկավարժական ընկերության հետ միասին Դոնի Ռոստովում մեծ սեմինար անցկացրեց մանկավարժների, բուհերի և միջնակարգ դպրոցի բարձր դասարանների համար։ Սեմինարից առաջ ավելի քան հաղար դասատուներից (ճնշող

10 Ю. Суровцев, նշվ. աշխ., էջ 367։

մեծամասնությունը ազգությամբ ռուս) ստացվել և ընդհանրացվել էին նախօրոք կազմված ու տարածված հարցաթերթիկի պատասխանները։ «Սիբելի գրողներին» մասին հարցին ռուս մանկավարժները տվել էին շատ բնորոշ պատասխաններ՝ տասնյակի մեջ առաջին տեղում հայտնվել էին կիրգիզ Այտմատովը, բելոռուս Բիկովը, ավարացի Համզատովը, հայուհի Կապուտիկյանը»[11]։

Ժամանակակից փուլում սովետական գրողների ստեղծագործության մեջ ժողովրդական բնավորությունների սոցիալական տարբերակումը նույնպես շատ լայն է, այն իր մեջ ներառնում է մեր հասարակության բոլոր առաջադիմական ուժերը, որոնք արտահայտում են սովետական մարդկանց հայացքներն ու ձգտումները։ Շատ հաճախ, ստեղծելով ժողովրդական բնավորություններ, գրողները դիմում են գյուղի ավանդական փորձին, նկատի ունենալով այն փաստը, որ և՛ ռուս ժողովուրդը, և՛ Սովետական Միության ուրիշ շատ ժողովուրդներ ոչ վաղ անցյալում մեծամասնությամբ հողագործներ էին։ Այդ կարգի վառ ու արտահայտիչ բնավորություններ են ստեղծել Մ. Ալեքսեևը, Վ. Ռասպուտինը, Ս. Զալիգինը, Պ. Պրոսկուրինը (ՌՍՖՍՀ), Մ. Ստելմախը, Պ. Զագրեբելնին, Օ. Գոնչարը (Ուկրաինա), Ի. Դրուցեն (Մոլդավիա), Ի. Մելեժը, Ի. Մամյակինը (Բելոռուսիա), Մ. Գալշոյանը, Ս. Խանզադյանը, Հ. Մաթևոսյանը (Հայաստան), Յու. Բալտուշիսը (Լիտվա), Ա. Յակուբովը (Ուզբեկստան) և ուրիշներ։ Հաճախ այդ բնավորություններն ունեն անբասիր բարոյականություն, էպիկական-մոնումենտալ խառնվածք։ Այդպիսի հերոսների օրինակով գրողները ձգտում են, Ա. Բոչարովի խոսքերով ասած, «գեղարվեստորեն շոշափելի կերպով վերակերտել աշխատավոր ժողովրդի հոգևոր գծերը։ Դա գրականություն է ընդհանուր հոգևոր-բարոյական արժեքների մասին, որ հարկավոր է պահպանել, փրկել կործանումից»[12]։

Բայց միևնույն ժամանակ, ժամանակակից պայմաններում ստուգելով նման բնավորությունների «կենսունակությունը», գրողները երբեմն ցույց են տալիս դրանց սահմանափակվածությունը, այն նորը ճիշտ կերպով ու համապատասխանորեն ընկալելու անընդունակությունը, որը մտնում է ժողովրդական կյանքի մեջ։ Այդպիսին են Աննա Ստեպանովնան և Դարյա Պինիգինան, Վ. Ռասպուտինի «Վերջին ժամկետը» և «Հրաժեշտ Մատյորային» գրքերից, Հ. Մաթևոսյանի «աղվես» Գիքորը կամ «նացիոնալիստ Մեսրոպը», Յու. Բալտուշիսի Յուղասը, Մ. Իբրահիմբեկովի Ջալիլ-մուալիմը և ուրիշներ։ Բարձր գնահատելով ավանդական ժողովրդական փորձի և ժողովրդական բարոյականության լավագույն գծերը, գրողները իրենց ստեղծագործություններով պայքարում են հետամնաց, իր դարն ապրած այն ամենի դեմ, որոնք խանգարում են առաջընթացին։

Բանվոր դասակարգը և քաղաքի աշխատավորական լայն շերտերը նույնպես մտնում են ժամանակակից գրականության մեջ որպես ժողովրդական գիտակցության և ժողովրդական գաղափարախոսության արտահայտիչներ՝ սովետական հասարակության զարգացման նոր փուլում։ Բանվոր դասակարգի ներկայացուցիչներին պատկերելու մեջ ժողովրդական բնավորությունների ինտերնացիոնալիզմը արտահայտվում է ավելի վառ ու հստակ, քան գյուղացիության ներկայացուցիչների մեջ, քանի որ գյուղացիությունը իր բնույթով ավելի ինքնամփոփ է, անշարժ պահպանում է ժողովրդական կյանքի բազմադարյան կացութաձևի նշանները։ Գյուղացիական և բանվորական բնավորությունները միմյանց լրացնում կամ փոխադարձաբար մեկը մյուսին են վերածվում այնպիսի ստեղծագործություններում, ինչպես Մ. Պլետնևի «Հանքահորը», Յու. Գոնչարովի «Վերջին հունձը», Ս. Խանզադյանի «Քաջարանը»։ Գրողները մեծ ուշադրություն են նվիրում բանվորների ինտերնացիոնալ կոլեկտիվներին, ինչը առանձնապես բնորոշ է Ծայր հյուսիսի, Սիբիրի և Հեռավոր արևելքի կառույցների մասին պատմող վեպերին (Ա. Ռամշուկ՝ «Աղքատ մայրցամաք», Վ. Հա-

[11] Նույն տեղում, էջ 365։

[12] А. Бочаров, Бесконечность поиска, М., 1982, с. 51.

ությունյան՝ «Քարե զանգեր», Ս. Սարտակով՝ «Բարբինյան պատմվածքներ»)։

Սովետական շատ գրողների ստեղծագործություններում տպավորիչ գույներով են նկարագրվում ժողովրդական մտավորականությունը, նրա դերը ժողովրդական լայն զանգվածների դաստիարակության և լուսավորության գործում, բարոյական բարձր հատկությունները, որոնք նպաստում են անհատի և ժողովրդի ինքնագիտակցության բարձրացմանը (Չ. Այտմատովի «Առաջին ուսուցիչը», Դ. Գրանինի «Նկարը», Ի. Դրուցեի «Հասած սերկևիլի բույրը», Վ. Հարությունյանի «Քարե զանգերը»)։

Սովետական հասարակության զարգացման ժամանակակից փուլում մեր երկրում բնակվող տարբեր ազգերի և ազգությունների ներկայացուցիչների մեջ գնալով դրսևորվում են հոգեբանական ու բարոյական կացութաձևի ընդհանրության ավելի ու ավելի շատ գծեր՝ պայմանավորված սոցիալական կյանքի ընդհանրությամբ։ Ժամանակակից մարդը իր մեջ միավորում է այն սոցիալական հատկությունները, որոնք դաստիարակվել են նոր, սոցիալիստական իրականության մեջ, և ազգային հատկությունները, որոնց մեջ կան և այնպիսիք, որոնք սկիզբ են առել ժողովրդական կյանքի հաղարամյա ակունքներից։

Մեր ժամանակի հերոսների կերպարները ստեղծելիս ՍՍՀՄ տարբեր հանրապետությունների գրողները ժառանգում են և հայրենի գրականության լավագույն ավանդույթները, դրանք լրացնելով մարդկային բարձր բովանդակությամբ, և ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական գրականությունների ավանդույթները, որոնք դարձել են ամբողջ ընդհանուր միութենական գրական պրոցեսի սեփականությունը։ Պատահական չէ, որ վերջին տարիների սովետական բազմազգ գրականության մեջ դրսևորվել են այնպիսի ժողովրդական բնավորություններ, որոնք համանման են սոցիալական, բարոյական և հոգեբանական կացութաձևում։ Դրանք են Պ. Պրոսկուրինի Զախար Դերյուգինը, Ֆ. Աբրամովի Միխայիլ Պրյասլինը, Չ. Այտմատովի Տանաբայը, Օրգանը ու Եդիգեյը, Ի. Մելեժի Ապեյկան ու Դյատելը, Մ. Գալշոյանի իմաստուն Ծերուկները, Վ. Պոպովի Սերաֆիմ Ռուդնևը և մի շարք այլ գործող անձինք։ Այդ գրողներից յուրաքանչյուրը ձգտում է նոր բնավորության բացահայտմանը, անկրկնելի անհատների ստեղծմանը, որի պատճառով ժամանակակից սովետական արձակում ժողովրդական բնավորությունները պատկերվում են բազմաթիվ տարբերակներով։ Դրանցում է մարդկային անհատականությունների ռեալ հարստությունը, որը վկայում է ամբողջ սովետական ժողովրդի ազգամիջյան համագործակցության յուրօրինակության և անսպառության մասին։ Բացի այդ, հոգեբանական անկրկնելիության միջով միշտ թափանցում է գլխավորը՝ դա մեր ժամանակակիցն է, սովետական մարդը՝ քաղաքացիական ու բարոյական ակտիվ դիրքորոշմամբ։ Ժամանակակից սովետական գրականության ստեղծած մարդկային բնավորությունների ամբողջ բազմազանությունը կարելի է միավորել սովետական «ժողովրդական բնավորություն» տարողունակ հասկացությամբ, որը ձևավորվել է պատմականորեն։

Այսպիսով, ազգայինի և ինտերնացիոնալի միասնության մեջ ձևավորվում են սովետական ժողովրդական բնավորության գծերը, որը և որոշում է մեր հասարակության իսկական դեմքը ժամանակակից փուլում։ Ժողովրդական կյանքի համասովետական բովանդակությունը արտացոլվում է ամենաբազմազան ազգային ձևերի մեջ, բայց միանգամայն պարզորոշ է ՍՍՀՄ ժողովուրդների՝ տարբեր լեզուներով խոսող մարդկանց պրոբլեմների, հոգսերի, տագնապների և ուրախությունների ընդհանրության միտումը։ Իր ազգային դեմքն է գտնում մի թեմա, որ այդ տեսակետից առավել շեղոք էր թվում 30—40-ական թթ.՝ «արտադրական» թեման։ Դրանում բացվում են բանվորական կոլեկտիվների ինտերնացիոնալ կազմի աճի հետ կապված տեսանկյունները, ուժեղանում է գրողների ձգտումը՝ ցայտուն գույներով ցույց տալու գործող անձի ազգային բնավորության այս կամ այն գծերը՝ նրա անհատականությունն ընդգծելու և ուրիշների հետ համեմատելու համար։ Գրական ստեղծագործությունների հերոսների բազմազգ կազմը արտացոլում է բուն իրականության ռեալ պրոցեսները։ Գրող-

սները ուշադրություն են դարձնում նրան, թե ինչպես է աշխատանքը նպաստում նախկինում ազգային կամ կրոնական նախապաշարմունքներով տարանջատված մարդկանց համախմբմանը։ Հերոսը, որը ազգային բնավորության տիպն է, այլազգի շրջապատում տվյալ կոլեկտիվում իրեն դիտում է իբրև՝ իր ժողովրդի արժանավոր ներկայացուցիչ դրանից բխող ողջ նախանձախնդրությամբ։ Դրա հետևանքով ժողովրդի արժանավոր ներկայացուցիչները ձգտում են առանձնացնել և իրենց մեջ դաստիարակել ազգային բնավորության լավագույն հատկությունները։ Ազգամիջյան ընդհանրության, «սովետական մարդուս ծննդյան մասին պատմում է Վ. Կոժեվնիկովը «Կեսօրին արևոտ կողմում» վեպում. «...Ինչպես աղբյուրների միախառնումից առաջանում է գետի հզոր հորդառատությունը, այնպես էլ այստեղ մարդկանց հոգիների միախառնումից առաջ էր գալիս նրանց հոգևոր հզորությունը, մարդու մեջ ծնունդ տալով նորին, նրան իմաստավորելով բոլորի համար համընդհանուր նոր գծերով»[13]։

Այդ երևույթը դարձավ 60—70-ական թվականների սովետական բազմազգ արձակի այնպիսի ստեղծագործությունների հիմքը, ինչպես Պ. Բրովկայի «Երբ միախառնվում են գետերը» վեպը, որը պատմում է ուկրաինացիների, բելոռուսների և ռուսների համատեղ ջանքերով երեք հանրապետությունների բահմանագծում կառուցվող հիդրոէլեկտրակայանի մասին, Ս. Սարտակովի «Սառցե գանձ» վեպը, որտեղ գլխավոր հերոսներից մեկը վրացի Ցագերիձեն է, որն իր բոլոր ուժերը նվիրել է Սիբիրի արդյունաբերական զարգացմանը, Ս. Խանզադյանի «Քաջարան» վեպը, որ պատմում է, թե ինչպես Հայաստանում իրենց երկրորդ հայրենիքը գտան Սերաֆիմ Պբուտովը և նրա կինը՝ Ավդոտյան, որոնք եկել էին մասնակցելու մետալուրգիական նոր կոմբինատի կառուցմանը։

ՍՍՀՄ ժողովուրդների գրականությունների մեջ ժողովրդական բնավորությունների պատկերման սկզբունքների ընդհանրությունը որոշվում է նրա հիմնական միտումների զարգացման միասնությամբ։ Կուսակցության XXVII համագումարին տրված ՍՄԿԿ Կենտկոմի քաղաքական զեկուցման մեջ ասվում է. «...Ոչ կուսակցությունը, ոչ էլ ժողովուրդը հանդիսային բազմագրության և մանր կենցաղապրպտման, կոնյուկտուրականության ու գործամոլության կարիք չունեն։ Հասարակությունը գրողից սպասում է գեղարվեստական հայտնագործություններ, կյանքի ճշմարտություն, որը միշտ եղել է իսկական արվեստի էությունը»[14]։

Սովետական ժողովրդական բնավորության արտահայտման ձևերի բազմազանությունն ու յուրօրինակությունը կախման մեջ են գտնվում գրողի ձիրքից, նրա գեղարվեստական վարպետությունից և գաղափարական համոզվածությունից։ Ժամանակակից գրողները ժողովրդից ելած մարդու մեջ որոնում են և՛ ժամանակի տրվածությունը, և՛ նրա պոտենցիալը, որն ընդունակ է ծառայելու հասարակության ամրապնդմանն ու զարգացմանը, նրա հետագա դեմոկրատացմանը։ Հերոսի բնավորությունը տրվում է գրողի գեղարվեստական իդեալին համապատասխան, որտեղ, նրա ամբողջ անհատականությամբ հանդերձ, անպայմանորեն առկա են սոցիալիստական ռեալիզմի մեթոդի ընդհանուր սկզբունքները՝ ժողովրդայնություն, պատմականություն, սոցիալական և բարոյական համոզվածություն մեր հասարակության հիմնարար գաղափարների ճշմարտության մեջ։ Վերջին տարիներին բազմազգ սովետական գրականության ստեղծած ժողովրդական բնավորությունների բազմազանությունը վկայում է, որ գրողները այդ խնդրին մոտենում են ամենայն պատասխանատվությամբ, ընդհանուրի և առանձնահատուկի, ազգայինի և ինտերնացիոնալի, սոցիալականի և հոգեբանականի, ավանդականի ու նորի ըմբռնմամբ։ Այժմեականու-

---

[13] В. Кожевников, В полдень на солнечной стороне, М., 1975, с. 102.

[14] Մ. Ս. Գորբաչով, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի քաղաքական զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVII համագումարին, Երևան, 1986, էջ 151։

թյան իսկական հերոսի պատկերման ուղիների և եղանակների որոնումը շարունակվում է։ Շարունակվում է նաև «ժողովրդական բնավորություն» կատեգորիայի նոր գեղագիտական և սոցիալ-բարոյական բովանդակության իմաստավորման պրոցեսը քննադատության և գրականագիտության մեջ՝ նրա հիմնական տեսանկյուններով ու հարաբերություններով։

К ВОПРОСУ О КАТЕГОРИИ «НАРОДНЫЙ ХАРАКТЕР» В СОВЕТСКОМ ЛИТЕРАТУРОВЕДЕНИИ

ТАТЬЯНА ЩЕПАКОВА

Резюме

Проблемы формирования народных характеров в литературе и пути их анализа в литературной критике и литературоведении достаточно сложны и неоднозначны, о чем свидетельствует ряд литературных дискуссий последних лет. Проблема изображения народных характеров рассматривается в связи с проблемой положительного героя литературы последних лет, и это вполне закономерно. Но между этими понятиями нет полного тождества, так как в народных характерах находят отражение не только лучшие черты народа, но и те, которые вызваны недостатками и пережитками народной жизни.

Многообразие народных характеров, созданных многонациональной советской литературой за последние годы, свидетельствует о том, что писатели подходят к этой проблеме со всей ответственностью, с пониманием сложности и диалектики этого понятия. Процесс осмысления категории «народный характер» связан с общественной жизнью страны. Поиск путей и способов изображения подлинного героя современности продолжается.